Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Պետական բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Կառավարության պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ 18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվար-ապրիլ ամիսներին տնտեսական ակտիվությունը շարունակել է պահպանվել բարձր մակարդակում, սակայն աճի կառուցվածքում և ամսական դինամիկայում նկատվում են աճի դանդաղման ազդակներ: Ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) աճը կազմել է շուրջ 7.1%՝ մարտի համեմատ արագանալով շուրջ 0.5 տոկոսային կետով, սակայն կուտակային աճը նվազել է մինչև 6.9%՝ հունվար-մարտի 7.1%-ի համեմատ:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային[1], %



2026թ. հունվար-ապրիլ ամիսներին աճի հիմնական շարժիչները շարունակել են մնալ արդյունաբերությունը և ծառայությունները՝ համապատասխանաբար 2.9 և 2.1 տոկոսային կետ նպաստումներով, մինչդեռ առևտրի համեմատաբար թույլ դինամիկան ընդամենը 0.7 տոկոսային կետ նպաստմամբ սահմանափակել է տնտեսական ակտիվության ավելի արագ աճը: Շինարարության ոլորտի աճը ևս դրական է եղել՝ կազմելով 1.2 տոկոսային կետ:

[1] Նախորդ ամիսների ՏԱՑ-ի ամսական ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին, տոկոսային կետ[2]



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպն ապրիլին որոշակիորեն վերականգնվել է՝ մարտին արձանագրված կտրուկ դանդաղումից հետո: 2026թ. ապրիլին արդյունաբերության թողարկման աճը կազմել է 11.7%, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը կազմել է 13.0%՝ պահպանվելով հունվար-մարտի 13.4% մակարդակին մոտ: Չնայած ապրիլյան վերականգնմանը՝ ոլորտի դինամիկան շարունակում է մնալ անկայուն, քանի որ

[2] Նպաստումների հաշվարկն իրականացվել է ՏԱՑ-ի՝ 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

արդյունաբերության աճը դեռևս զգալիորեն պայմանավորված է առանձին ենթաոլորտների և կարճաժամկետ գործոնների ազդեցություններով:

Հունվար-մարտ ամիսների տվյալներով[3] արդյունաբերության ոլորտի աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 9.5% և 36.8%՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 6.2 և 6.0 տոկոսային կետով: Արդյունաբերության աճին դրական նպաստում է ունեցել նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ ունենալով շուրջ 1.2 տոկոսային կետ նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը եղել է գրեթե զրոյական:

Հանքարդյունաբերության ոլորտի աճը պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման շուրջ 40.5% աճով: Մշակող արդյունաբերության աճին մեծամասամբ նպաստել են «հիմնական մետաղների արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն», «խմիչքների արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար 4.8, 2.2, 1.3 և 1.1 տոկոսային կետ: «Հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի բարձր աճը (շուրջ 35.8%) հիմնականում պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման հետ կապված գործոններով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



[3] Արդյունաբերության ապրիլ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

Շինարարության ոլորտում բարձր աճի տեմպերը շարունակվել են նաև ապրիլին՝ պահպանելով արագացման միտումը: 2026թ. ապրիլին շինարարության աճը կազմել է 24.7%, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը հասել է 22.9%-ի՝ հունվար-մարտի 22.0%-ի համեմատ: Ոլորտի՝ նման բարձր և շարունակաբար արագացող աճը հատկապես ուշագրավ է նախորդ տարվա բարձր բազայի պայմաններում, ինչպես նաև այն սպասումների ֆոնին, որ Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ավարտից հետո շինարարության աճի տեմպերը պետք է աստիճանաբար թուլանային:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում աճի տեմպն ապրիլին շարունակել է արագանալ՝ պահպանելով համեմատաբար կայուն դրական դինամիկա: 2026թ. ապրիլին ծառայությունների աճը կազմել է 9.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը հասել է 7.6%-ի՝ հունվար-մարտի համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-մարտ ամիսների տվյալներով[4], պայմանավորված է եղել գրեթե բոլոր ենթաոլորտներում գրանցված աճերով, որոնցից ամենանշանակալին են եղել «տրանսպորտի» և «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտների նպաստումները՝ կազմելով համապատասխանաբար 1.7 և 1.6 տոկոսային կետ: Միայն կրթական ծառայությունների գծով է շարունակվել

[4] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

գրանցվել բացասական ցուցանիշ՝ 2.3%, ինչն ընդհանուր ծառայությունների աճին հակազդել է 0.1 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում աճի տեմպն ապրիլին շարունակել է մնալ թույլ՝ սահմանափակելով տնտեսական ակտիվության ընդհանուր աճը: 2026թ. ապրիլին առևտրի աճը կազմել է ընդամենը 0.1%, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը դանդաղել է մինչև 1.5%՝ հունվար-մարտի 2.1%-ի համեմատ: Այս դինամիկան վկայում է, որ փետրվարին արձանագրված արագացումը կարճաժամկետ բնույթ է կրել, իսկ առևտրի ոլորտը շարունակում է մնալ տնտեսական ակտիվության աճը զսպող հիմնական գործոններից մեկը:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[5]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման դինամիկան ապրիլին կրկին վատթարացել է՝ ընդգծելով արտաքին առևտրի դինամիկայի անկայուն բնույթը: 2026թ. ապրիլին արտահանման ծավալները նվազել են 25.9%-ով, ինչի հետևանքով հունվար-ապրիլ ամիսների կուտակային ցուցանիշը դարձել է բացասական՝ կազմելով -3.3%՝ հունվար-մարտի 6.4% աճի դիմաց: Սա վկայում է, որ նախորդ ամիսներին արձանագրված վերականգնումը կայուն բնույթ չի ունեցել, իսկ արտահանման դինամիկան շարունակում է մեծապես կախված մնալ առանձին ապրանքախմբերի և վերաարտահանման հետ կապված գործոններից:

Հունվար-մարտ ամիսների տվյալներով[6]՝ արտահանման աճը մեծամասամբ պայմանավորվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 96.0% աճով, որի նպաստումն արտահանման ընդհանուր աճին կազմել է 12.7 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման աճը զսպել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 26.4% անկումը, որի բացասական նպաստումը կազմել է 7.8 տոկոսային կետ: Մնացած ապրանքախմբերի ազդեցությունն արտահանման աճի վրա էական չի եղել՝ բացառությամբ «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի: Վերջինս նվազել է 11.4%-ով (նախորդ ամիս աճել էր 6.5%-ով) և ընդհանուր արտահանման աճին հակազդել 2.25 տոկոսային կետով:

[5] Արտահանման և ներմուծման՝ 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[6] Արտահանման ապրիլ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դինամիկան ապրիլին կրկին թուլացել է՝ շարունակելով արտաքին առևտրի անկայուն պատկերը: 2026թ. ապրիլին ներմուծման ծավալները նվազել են 5.8%-ով, ինչի հետևանքով հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը դանդաղել է մինչև 2.5%՝ հունվար-մարտի 5.7%-ի համեմատ: Ներմուծման դինամիկան, ինչպես արտահանման դեպքում, կայուն չէ, և նախորդ ամիսներին գրանցված բարձր աճերը հիմնված էին կարճաժամկետ գործոնների վրա:

Հունվար-մարտ ամիսների տվյալներով[7], ներմուծման աճին զգալի դրական նպաստում են ունեցել թվով հինգ ապրանքախմբեր՝ «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «հանքահումքային արտադրանք», որոնց ընդհանուր նպաստումը կազմել է 11.6 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, ներմուծման աճը զսպել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի 43.3% անկումը, որի բացասական նպաստումը կազմել է 7.1 տոկոսային կետ:

[7] Ներմուծման ապրիլ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[8]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը մարտին կտրուկ նվազել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2026 թվականի հունվար-մարտ ամիսներին՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է ընդամենը 2.9%-ով (հունվար-փետրվարին աճի տեմպը կազմել էր 5.4%)՝ կազմելով 307.6 հազ. դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպն էլ ավելի է նվազել՝ հասնելով 1.7%-ի (հունվար-փետրվարի աճը՝ 5.1%), իսկ անվանական աշխատավարձի չափը կազմել է 335.8 հազ. դրամ: Պետական հատվածում աշխատավարձի աճն արագացել է՝ հասնելով 6.9%-ի (հունվար-փետրվարի աճը՝ 5.4%)՝ կազմելով 234.8 հազ. դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-մարտին, %



[8] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2026թ. ապրիլին ՀՀ դրամը նախորդ տարվա համեմատ արժևորված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժեզրկված: 2026թ. ապրիլին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 374.2 դրամ՝ նախորդ տարվա ապրիլի համեմատ նվազելով 16.5 դրամով: Եվրոյի նկատմամբ փոխարժեքը կազմել է 437.7 դրամ՝ նախորդ տարվա ապրիլի համեմատ նվազելով 0.8 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում արժեզրկվել է. փոխարժեքը կազմել է 4.9 դրամ՝ նախորդ տարվա ապրիլի համեմատ աճելով 0.2 դրամով: Հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 4.5%, իսկ եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը նույն չափով արժեզրկված է եղել: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ դրամն արժեզրկվել է 9.5%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների կուտակային աճի տեմպը որոշակի արագացել է: 2026թ. ապրիլին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 16.3%՝ մարտի համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով, մինչդեռ հունվար-ապրիլ ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 13.7%-ով՝ հունվար-մարտի համեմատ արագանալով 1.8 տոկոսային կետով:

Եկամուտների աճը պայմանավորված է եղել հարկային եկամուտների աճով, որը հունվար-ապրիլ ամիսներին կազմել է 14.4%՝ հունվար-մարտի համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում ոչ հարկային եկամուտները նվազել են 12.5%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհներն աճել են 2.8 անգամ՝ 3.8 մլրդ դրամով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն է ունեցել շահութահարկը՝ աճելով 12.7%-ով և ընդհանուր հարկային եկամուտների աճին նպաստելով 3.3 տոկոսային կետով: Նշանակալի նպաստում են ունեցել նաև եկամտային հարկը և բնապահպանական ու բնօգտագործման վճարների գծով մուտքերը, որոնց նպաստումը կազմել է համապատասխանաբար 2.4-ական տոկոսային կետ, ընդ որում՝ եկամտային հարկի աճը կազմել է 9.9%, իսկ բնապահպանական և բնօգտագործման վճարների աճը՝ 206.5%: Հարկային եկամուտների աճին դրական նպաստում է ունեցել նաև ԱԱՀ-ն՝ աճելով 6.6%-ով և ապահովելով 1.9 տոկոսային կետ նպաստում: Պետական տուրքերի աճը ևս էականորեն բարձր է եղել՝ կազմելով 54.4%, ինչի արդյունքում դրանց նպաստումը ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել է 1.4 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար-ապրիլ		2026թ. Հունվար-ապրիլ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**14.5**	**14.5**	**14.4**	**14.4**
Ավելացված արժեքի հարկ	28.6	7.4	6.6	1.9
Ակցիզային հարկ	3.0	0.1	18.5	0.7
Շահութահարկ	17.8	4.4	12.7	3.3
Պետական տուրք	20.7	0.5	54.4	1.4
Մաքսատուրք	5.0	0.1	-5.9	-0.2
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-62.1	-2.1	206.5	2.4
Այլ հարկեր	-3.7	-0.1	45.6	1.2
Շրջանառության հարկ	22.0	0.7	20.4	0.7
Եկամտային հարկ	10.8	2.8	9.9	2.4
Սոցիալական վճարումներ	15.4	0.6	14.5	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը նույնպես արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026թ. հունվար-ապրիլին աճել են 7.6%-ով՝ կազմելով 1,002.1 մլրդ դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է եղել ընթացիկ ծախսերի

14.7% աճով, որն ընդհանուր աճին նպաստել է 12.8 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 41.3%-ով՝ ծախսերի աճին հակազդելով 5.3 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը / պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակել է լինել հավելուրդային: 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին եկամուտների և ծախսերի վերոնշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ շուրջ 125.8 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավել է շուրջ 2.1 անգամ կամ 64.9 մլրդ դրամով:

5.4. Կառավարության պարտք

ՀՀ կառավարության պարտքի անվանական մակարդակը նվազել է նախորդ ամսվա համեմատ, սակայն նախորդ տարվա համեմատ աճել է: 2026թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը կազմել է 13,825.1 մլն ԱՄՆ դոլար՝ 243.9 մլն ԱՄՆ դոլարով նվազելով մարտի համեմատ: Սակայն նախորդ տարվա ապրիլի համեմատ կառավարության պարտքն աճել է 5.9%-ով, որը 2.0 տոկոսային կետով ավելի ցածր է, քան մարտի աճն էր: Նույն ժամանակահատվածում ներքին պարտքի աճը կազմել է 2.9%, իսկ արտաքին պարտքինը՝ 3.6%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա համեմատ շարունակել են նվազել: 2026թ. ապրիլին պետական կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6.9% և 7.7%՝ նախորդ ամսվա համեմատ մնալով գրեթե նույն մակարդակում: Սակայն նախորդ տարվա ապրիլի համեմատ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են համապատասխանաբար 1.3, 1.8 և 1.2 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպի արագացումը շարունակվում է: 2026թ. ապրիլին 12-ամսյա գնաճը հասել է 5.3%-ի՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով: Գնաճի արագացումը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի և տրանսպորտային ծառայությունների գների աճով: Կենտրոնական բանկը դեռևս չի փոխել դրամավարկային քաղաքականության ուղղությունը՝ մայիսի սկզբին տոկոսադրույքը պահպանելով 6.5% մակարդակում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպն ապրիլին որոշակիորեն դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: 2026թ. ապրիլին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 15.9%-ով՝ մարտի 16.6%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ռեզիդենտներից ներգրավված ավանդների ավելացմամբ, որոնց աճը կազմել է 21.9%, իսկ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը նվազել է 2.8%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



2026թ. ապրիլին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է շուրջ 8.7 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդները նույնպես դրականորեն են նպաստել ընդհանուր աճին, սակայն դրանց ազդեցությունը եղել է ավելի սահմանափակ: Մասնավորապես, այլ ֆինանսական կազմակերպությունների և ձեռնարկությունների ավանդների նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.8 և 3.3 տոկոսային կետ, իսկ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների անկումն ընդհանուր ավանդների աճին հակազդել է 0.7 տոկոսային կետով:

6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը շարունակել է մնալ բարձր: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.2%-ով՝ մարտի 21.4%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք աճել են համապատասխանաբար 20.8%-ով և 63.0%-ով: Ընդ որում, ոչ ռեզիդենտների վարկերի ծավալների նման բարձր աճը պայմանավորված է բազային էֆեկտով՝ նախորդ տարվա ապրիլին գրանցված անկմամբ:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը: 2026թ. ապրիլին իրավաբանական անձանց վարկերի աճը կազմել է 21.2%՝ որոշակիորեն դանդաղելով մարտի համեմատ, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճը կազմել է 20.4%՝ փոքր-ինչ արագանալով նախորդ ամսվա համեմատ: Վարկերի աճին երկու խմբերն էլ շարունակել են ունենալ գրեթե համաչափ դրական նպաստում:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[9]



2026թ. ապրիլին տնտեսության հիմնական ուղղություններին տրամադրված վարկերը շարունակել են աճել: Ապրիլին ամենամեծ նպաստում ունեցող ուղղությունը փոխվել է՝ սպառողական վարկերից դառնալով ծառայությունների ոլորտը (աճը՝ 25.3%)՝ 3.9 տոկոսային կետ նպաստումով: Սպառողական վարկերի նպաստումը ևս բավականին բարձր է եղել՝ կազմելով 3.8 տոկոսային կետ: Նշանակալի նպաստում են ունեցել նաև շինարարության ոլորտին տրված վարկերի (աճը՝ 23.6%) և հիպոթեքային վարկերի (աճը՝ 8.2%) աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5 և 1.8 տոկոսային կետ:

[9] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[10]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է բարձր լինել: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2026թ. մարտին կազմել է 155.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մարտի 56.2 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Կուտակային՝ հունվար-մարտ ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է շուրջ 3.2 անգամ, ինչը պայմանավորված է ինչպես արտահոսքի կրճատմամբ (շուրջ 10.1%), այնպես էլ ներհոսքի աճով (շուրջ 15.8%):

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին տնտեսական ակտիվությունը շարունակել է պահպանվել համեմատաբար բարձր մակարդակում, սակայն աճի կառուցվածքում նկատվում են դանդաղման ազդակներ: Ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը կազմել է շուրջ 7.1%՝ մարտի համեմատ որոշակի արագանալով, սակայն կուտակային աճը նվազել է մինչև 6.9%՝ հունվար-մարտի 7.1%-ի դիմաց: Աճի հիմնական շարժիչներն են արդյունաբերությունը և ծառայությունները, իսկ առևտրի թույլ դինամիկան շարունակում է սահմանափակել տնտեսական ակտիվության ավելի արագ աճը: Սա վկայում է, որ տնտեսական ակտիվության բարձր աճը պահպանվում է, սակայն դրա կառուցվածքը դարձել է ավելի անհավասարակշիռ:

[10] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2026թ. ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. Արդյունաբերության աճն ապրիլին որոշակիորեն վերականգնվել է, սակայն ոլորտի դինամիկան շարունակում է մնալ անկայուն: Ապրիլին արդյունաբերության թողարկման աճը կազմել է 11.7%, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը կազմել է 13.0%՝ պահպանվելով հունվար-մարտի 13.4% մակարդակին մոտ: Միևնույն ժամանակ, ոլորտի աճը շարունակում է զգալիորեն պայմանավորված լինել առանձին ենթաոլորտների և կարճաժամկետ գործոնների ազդեցությամբ, այդ թվում՝ հանքարդյունաբերության և հիմնական մետաղների արտադրության բարձր աճերով: Վերջինիս բարձր աճը մեծապես պայմանավորված է վերաարտահանման հետ կապված գործոններով և կարող է դադարել կամ կտրուկ նվազել ցանկացած պահի:

3. Արտաքին առևտրի դինամիկան ապրիլին կրկին վատթարացել է՝ հաստատելով նախորդ ամիսներին արձանագրված աճերի անկայուն բնույթը: Արտահանման ծավալներն ապրիլին նվազել են 25.9%-ով, ինչի հետևանքով հունվար-ապրիլ ամիսների կուտակային ցուցանիշը դարձել է բացասական՝ կազմելով -3.3%՝ հունվար-մարտի 6.4% աճի դիմաց: Ներմուծման աճը նույնպես թուլացել է: Ապրիլին ներմուծումը նվազել է 5.8%-ով, իսկ կուտակային աճը դանդաղել է մինչև 2.5%: Սա վկայում է, որ արտաքին առևտրի նախորդ ամիսների վերականգնումը կայուն բնույթ չի ունեցել և շարունակում է առավելապես կախված մնալ առանձին ապրանքախմբերի ու վերաարտահանման հետ կապված գործոններից:

4. Գնաճային միջավայրը դարձել է ավելի մտահոգիչ, քանի որ գնաճի արագացումն ապրիլին շարունակվել է: 2026թ. ապրիլին 12-ամսյա գնաճը հասել է 5.3%-ի՝ մարտի 4.5%-ի դիմաց: Գնաճի արագացումը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի և տրանսպորտային ծառայությունների գների աճով: Այս պայմաններում, չնայած գնաճային ճնշումների ուժեղացմանը, Կենտրոնական բանկը մայիսի սկզբին պահպանել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 6.5% մակարդակում, ինչը ցույց է տալիս, որ դրամավարկային քաղաքականության դիրքը դեռևս չի խստացվել:

5. Հարկաբյուջետային հատվածում եկամուտների աճը պահպանվել է, սակայն ծախսերի կառուցվածքը շարունակում է մտահոգիչ մնալ՝ հատկապես կապիտալ ծախսերի կրճատման պատճառով: 2026թ. հունվար-ապրիլին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 13.7%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 14.4%-ով: Միևնույն ժամանակ, ընդհանուր ծախսերի 7.6% աճը ձևավորվել է հիմնականում ընթացիկ ծախսերի 14.7% աճի հաշվին, մինչդեռ կապիտալ ծախսերը նվազել են 41.3%-ով: Սա նշանակում է, որ բյուջեի ծախսային քաղաքականության մեջ շարունակում է գերակշռել ընթացիկ ծախսերի

ընդլայնումը, իսկ կապիտալ ծախսերը լիարժեք չեն կատարում տնտեսական աճի որակն ու երկարաժամկետ ներուժը բարձրացնելու իրենց դերը:

6. Շինարարության ոլորտում բարձր աճի տեմպերը և վարկավորման բարձր աճերը շարունակում են աջակցել ներքին պահանջարկին, սակայն միաժամանակ կարող են մեծացնել մակրոտնտեսական ռիսկերը: Շինարարության կուտակային աճը հունվար-ապրիլին հասել է 22.9%-ի, իսկ շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 23.6%-ով (168.3 մլրդ դրամով): Շինարարության ոլորտում գրանցված բարձր աճի և շինարարությանն ուղղվող վարկավորման ընդլայնման համադրությունը պահանջում է լրացուցիչ ուշադրություն՝ հատկապես անշարժ գույքի շուկայի պահանջարկի և գների հետագա դինամիկայի շուրջ հնարավոր ռիսկերի տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: